


**1.2.7. Մանրածախ առևտուր, այլ ծառայություններ
(սպառողական շուկա)**

ՀՀ սպառողական շուկա (մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը)

	2003թ. հունվար-ապրիլ		ընդհանուրի նկատմամբ, %	
	փաստացի ծավալը, մլն. դրամ	2002թ. հունվար-ապրիլ նկատմամբ, %	2003թ. հունվար-ապրիլ	2002թ. հունվար-ապրիլ
Մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը, ընդամենը	233856.2	110.7	100.0	100.0
<i>այդ թվում՝</i>				
մանրածախ ապրանքաշրջանառություն	173601.8	111.2	74.2	73.6
բնակչությանը մատուցված ծառայություններ	60254.4	109.6	25.8	26.4

ՀՀ սպառողական շուկայում մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալների տեսակարար կշիռները
(% -ով ընդհանուրի նկատմամբ)



2003թ. հունվար-ապրիլին գրանցվել է սպառողական շուկայի ծավալի աճ 2002թ. հունվար-ապրիլի համապատասխան ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, 10.7%-ով և դրանում 0.6 տոկոսային կետով ավելացել է մանրածախ ապրանքաշրջանառության ծավալի տեսակարար կշիռն ու համամասնորեն նվազել բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալի տեսակարար կշիռը:

Մանրածախ առևտուր


2003թ. հունվար-ապրիլին ՀՀ սպառողական շուկայում մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալը, ընթացիկ գներով, կազմել է 173601.8 մլն. դրամ, որը 2002թ. նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 11.2%-ով: 2003թ. ապրիլին մարտի համեմատությամբ մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը, համադրելի գներով, կազմել է 100.8%:

ՀՀ մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը 2003թ. հունվար-ապրիլին

	Ապրանքաշրջանառության ծավալը, մլն. դրամ	Ապրանքաշրջանառության տեսակարար կշիռը ընդհանուրի նկատմամբ, %
Ընդամենը	173601.8	100.0
<i>այդ թվում՝</i>		
խանութներ	94713.7	54.6
հանրային սնունդ	1588.6	0.9
սպառողական ապրանքների շուկաներ	48867.8	28.1
գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ	7132.5	4.1
կրպակներ	21299.2	12.3

Մանրածախ ապրանքաշրջանառության կառուցվածքն ըստ ձևավորման աղբյուրների, 2003թ. հունվար-ապրիլին

(%-ով ընդհանուրի նկատմամբ)



2003թ. հունվար-ապրիլին ՀՀ մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում մեծ տեսակարար կշիռ է ունեցել խանութներում, սպառողական ապրանքների շուկաներում և կրպակներում իրականացվող առևտուրը՝ 95.0% (164880.7 մլն. դրամ):

ՀՀ մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում առանձնակի տեղ ունեն սպառողական ապրանքների շուկաները: Հաշվառված սպառողական ապրանքների շուկաներից ստացված հաշվետվությունների տվյալներով և փորձագիտական լրահաշվարկի հիման վրա, 2003թ. հունվար-ապրիլին ապրանքաշրջանառության ծավալը, ընթացիկ գներով, կազմել է 48867.8 մլն. դրամ:

ՀՀ սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության ծավալների վերաբերյալ տվյալներն ըստ ՀՀ մարզերի և ք. Երևանի 2003թ. հունվար-ապրիլին


	Ապրանքաշրջանառության ծավալը, մլն. դրամ	այդ թվում՝ %-ով ընդհանուրի նկատմամբ	
		պարենային ապրանքներ	ոչ պարենային ապրանքներ
ք. Երևան	44736.0	12.5	87.5
Արագածոտն	90.1	-	100.0
Արարատ	237.7	15.6	84.4
Արմավիր	580.7	38.1	61.9
Գեղարքունիք	395.8	21.6	78.4
Լոռի	922.0	47.8	52.2
Կոտայք	585.8	14.7	85.3
Շիրակ	439.3	-	100.0
Սյունիք	162.2	1.5	98.5
Վայոց ձոր	79.5	-	100.0
Տավուշ	638.7	34.7	65.3
Ընդամենը ՀՀ	48867.8	13.7	86.3

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

Հարկ է նշել, որ հանրապետությունում հաշվառված սպառողական ապրանքների շուկաները հիմնականում մասնագիտացված են ոչ պարենային ապրանքների վաճառքով, որի տեսակարար կշիռը սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում, 2003թ. հունվար-ապրիլին, կազմել է 86.3%:

ՀՀ սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալն ըստ Երևան քաղաքի և մյուս մարզերի (ամփոփ)

(%-ով ընդհանուրի նկատմամբ)



2003թ. հունվար-ապրիլին 2002թ. հունվար-ապրիլի համեմատությամբ հանրապետության սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության ամբողջ ծավալում գրանցվել է Երևան քաղաքի շուկաների ապրանքաշրջանառության ծավալի տեսակարար կշռի նվազում 0.2 տոկոսային կետով:

2003թ. մայիսի 1-ի դրությամբ ապրանքային պաշարները մանրածախ առևտրի կազմակերպություններում կազմել են 35807.6 մլն. դրամ, իսկ ապահովվածությունը՝ 54օր:

ՀՀ սպառողական շուկայում իրենց ուրույն տեղն ունեն գյուղատնտեսական արտադրանքի շուկաները: Հունվար-ապրիլին այդ շուկաներում իրականացվող առևտրին բաժին է ընկել ընդհանուր ապրանքաշրջանառության ծավալի 4.1% կամ 7132.5¹ մլն. դրամը:

¹ Հանրապետությունում գործող գյուղատնտեսական արտադրանքի չկազմակերպած շուկաների ապրանքաշրջանառության ծավալները հաշվառված չեն:

Բնակչությանը մատուցված ծառայություններ


2003թ. հունվար-ապրիլին հանրապետությունում, ըստ ծառայությունների մատուցող կազմակերպություններից և անհատ ձեռնարկատերերից ստացված հաշվետվությունների տվյալների, ինչպես նաև չհաշվառված դաշտի լրահաշվարկի, բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը, ընթացիկ գներով, կազմել է 60254.4 մլն.դրամ, որը 2002թ. հունվար-ապրիլի նույն ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 9.6%-ով:

Բնակչությանը մատուցված կենցաղային ծառայությունների ծավալը կազմել է 874.2 մլն. դրամ, որը 2002թ. նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 29.4%-ով:

2003թ. հունվար-ապրիլին 2002թ. հունվար-ապրիլի համեմատ ծառայությունների ոլորտում արձանագրվել է սակագների 1.8% հավելաճ, որը հիմնականում պայմանավորված է օդային տրանսպորտի (4.9%), կենցաղային ծառայությունների (0.1%), փոստային և հեռահաղորդակցության (12.9%), կրթության (2.9%), մշակույթի (14.0%), զբոսաշրջության և էքսկուրսային (4.3%) ծառայությունների սակագների հավելաճով: Միաժամանակ, նվազել են բժշկական սպասարկման և առողջարանների ու հանգստյան տների ծառայությունների սակագները, համապատասխանաբար՝ 1.1 և 2.2%-ով:

**Բնակչությանը մատուցված ծառայությունների կառուցվածքը
2003թ. հունվար-ապրիլին**

(%-ով ընդամենի նկատմամբ)



2003թ. հունվար-ապրիլին բնակչությանը մատուցված ծառայությունների կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ են կազմել բնակարանային-կոմունալ տնտեսության (19146.0 մլն.դրամ) և մարդատար տրանսպորտի (18097.6 մլն.դրամ) ծառայությունները, համապատասխանաբար՝ 31.8 և 30.0%:

2003թ. հունվար-ապրիլին խաղատների ծառայությունների ծավալը կազմել է 309.4 մլն.դրամ կամ բնակչությանը մատուցված ծառայությունների ընդհանուր ծավալի 0.5%-ը: Բնակչությանը մատուցված համակարգչային ծառայությունների ծավալը կազմել է 22.6 մլն. դրամ: